


ԿԱՐԵՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄ ՌԱԶՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

War and Warfare in Late Antiquity: Current Perspectives (2 volume set: Late Antique Archaeology 8.1-8.2), ed. by Alexander Sarantis and Neil Christie, Brill: Leiden-Boston 2013, 1085 pages.¹:



Հանրահայտ «Բրիլ» հրատարակչության լույս ընծայած այս երկհատորյակը հարմար առիթ է համառոտ անդրադառնալու ռազմի պատմագիտության ոլորտում վերջին երկու-երեք տասնամյակներին արձանագրված զարգացումներին: Մեր կարծիքով, նույն հրատարակչության 1990-ականներից մինչև 2013 թ. հրատարակած «Ռազմի պատմություն» շարքի (Brill series: «History of Warfare», խմբ. Kelly De Vries, John France, Michael S. Neiberg, Frederick Schneid) 90-ից ավելի հատորների համեմատ այս երկհատորյակն ունի որոշակի առավելություններ, եթե, իհարկե, նման համեմատություն թույլատրելի է տարբեր դարաշրջաններ և տարածքներ ներկայացնող այս շարքի գրքերի միջև:

Սակայն ռազմի պատմության ոլորտում կարևոր ու խոշոր ներդրումից զատ, հայ մասնագետ ընթերցողի տեսանկյունից գրախոսվող երկհատորյակը դրականորեն առանձնանում է «ուշ ան-

տիկ»², այսինքն՝ մ.թ. 300–600-ականների ժամանակագրական շրջանակը քննության առնելու հանգամանքով: Այս դարաշրջանում են տեղավորվում հայոց կողմից քրիստոնեության ընդունումը, գրեթե գյուտը և այլ շրջադարձային իրադարձություններ: Սեղմ, բայց միաժամանակ ոչ շատ փոքր և քաղաքակրթության պատմության առումով կարևոր այդ ժամանակահատվածի ռազմի գործի ներկայացումը ակնհայտորեն շահել է պատմագիտական նյութի մատուցման հստակ կանոնների կիրառումից: Հենց այս և մի շարք այլ առումներով դա շահեկանորեն

¹ Ընդունվել է տպագրության 20.07.2014:

² Ուշ անտիկ պատերազմն ու ռազմի գործը. արդի տեսանկյուններ, 2 հատոր, խմբ.՝ Ալեքսանդր Սարանտիս և Նեյլ Քրիստի, Լեյդեն – Բոստոն, «Բրիլ» հրատ., 2013, 1085 էջ:

³ Այս շրջափուլի ժամանակագրական սահմաններն ընդունված է դիտել Դիոկղետիանոսի իշխանության գալուց (284 թ.) մինչև Հերակլիոսի մահը (641 թ.): Տե՛ս **Ralph W. Mathisen**, The Prosopography of the Later Roman Empire: Yesterday, Today and Tomorrow, Proceedings of the British Academy, 118 (2003), էջ 25:

տարբերվում է նույն «Բրիլ»-ի հրատարակած **Ք. Դե Վրայիսի** (Kelly De Vries) կազմած նախորդ՝ «Միջնադարյան ռազմի պատմության և տեխնոլոգիայի համահավաք մատենագրություն. 2003–2006 թթ. հավելմամբ» հատորից:

Ի տարբերություն «Բրիլ» հրատարակչության վերը նշված ինքնին շատ պատկառելի շարքի, գրախոսվող երկհատորյակը համեմատաբար վերջերս՝ 2003 թ. սկսված «Ուշ անտիկ հնագիտություն» շարքից է (Brill series: «Late Antique Archaeology») և լավագույնս ցուցադրում է այն էական ազդեցությունը, որ անցյալի ռազմական գործի մանրամասների վերականգնման վրա գրավոր սկզբնաղբյուրներին գուգահեռ ունի ժամանակակից հնագիտությունը: Այս ազդեցությունն ամենևին նորույթ չէ. մեր տարածաշրջանում այն առկա է գրեթե մեկուկես հարյուրամյակ: Բավական է հիշել, թե որքան կարևոր արդյունքների հանգեցրին Եփրատի ափամերձ Դուրա-Եվրոպոսի դեռևս 1930-ականների հայտնի պեղումները³: Այնինչ հետագա և մինչ օրս շարունակվող պեղումների աշխարհագրական ընդգրկման, ծավալների, մեթոդական հարուստ զինանոցի համեմատությամբ նշված հնավայրն ընդամենը համեստ մի ներդրում է ունեցել: Գրախոսվող երկհատորյակը, հատկապես առաջին հատորը, հաջողությամբ արտահայտում է ռազմի պատմագիտության ոլորտում տեղի ունեցած որակական փոփոխությունը, որն ինքնին հարակից տարբեր բնագավառներում հետազոտությունների քանակական աճի արդյունք է:

Նշենք նաև նման աշխատանքների հասարակական պատվերի գոյությունը, որը շարունակաբար խթանում է ռազմի պատմության ուսումնասիրությունը երկու հարակից ուղղությամբ: **Նախ**՝ ռազմի պատմագիտության կիրառական նշանակության գիտակցումը վերջին տասնամյակներում սկսել է տարբեր ու բազմազան ուսումնասիրողներ և ընթերցողներ հավաքագրել հիմնականում արևմտյան երկրներում⁴: Այս ընթացքում այն հաղթահարել է երկրորդ աշխարհամարտից հետո ռազմի պատմության ուսումնասիրության նկատմամբ որոշ անտարբերության շրջանը, ինչի վկայությունն են 1980-ականներից ու հատկապես 1990-ականներին և հետո Օքսֆորդի, Քեմբրիջի, Յեյլի, Պենսիլվանիայի համալսարանական, Օսֆորդ (Օքսֆորդ) Ռուլփիջ, Լոնդոնի համալսարանական քոլեջի (Լոնդոն), «Էշզեյթ» (Ֆարնեմ, ՄԹ), «Բրիլ» (Լեյդեն-Բոսթոն) և այլ առաջատար գիտական ու հանրամատչելի հրատարակությունների կողմից ռազմի պատմության մասին մենագրությունների շարքերի հիմնումը: Նախորդ տասնամյակներում պատմության ամսագրերում խիստ հազվադեպ հոդվածներից այսպիսի մեծ հորձանքը դեպի ընթերցողների կայն շրջանակ վկայում է հասարակական հետաքրքրության կտրուկ աճի մասին: Պատմականորեն կարճ այս ժամանակահատվածում ստեղծվել են երեք տասնակից ավելի մասնագիտական պարբերականներ, ինչը նույն պատվերի վկայությունն է⁵: **Երկրորդ**՝ տնական դադարից հետո հետաքրքրության նման սրացմանը 1990-ական և 2000-ականներին ավելացավ մեկ այլ գործոն, որը կարելի է անվանել «անվտանգության խնդիրներով հանրային ան-

3 Տե՛ս **Bivar, A.D.H.**, Cavalry Equipment and Tactics on the Euphrates Frontier, *Dumbarton Oaks Papers*, 26 (1972), 273–291. Պեղումներն իրականացրել է հայտնի հնագետ Ռոստովցևը, ռազմի պատմությանն առնչվող առաջին արդյունքները հրատարակելով դեռևս 1943 թ.: **M. Rostovtzeff**, The Parthian Shot, *American Journal of Archaeology*, 47, 2, p. 174–187.

4 Տե՛ս **Hanson V.D.**, The modern historiography of ancient warfare, in: **Sabin, P., H. van Wees and M. Whitby** (eds.) *The Cambridge History of Greek and Roman Warfare, Vol. 1: Greece the Hellenistic World and the Rise of Rome*, CUP: Cambridge 2008, p. 3–21; **Kelly De Vries**, *Cumulative Bibliography of Medieval Military History and Technology: Update 2003–2006*, History of Warfare series 46, Brill: Leiden 2008, xx–xxi:

5 Նշենք ամենահայտնիները՝ «*Journal of Military History*» (Society for Military History, USA, 1937–2014), «*War in History*» (Sage հրատ. 1994–2014), «*Gladius*» (1961–2014), «*War and Society*» (Maney Publishing հրատ., 1983–2014), «*Journal of Medieval Military History*» (Boydell and Brewer հրատ., 2002–2014), «*Journal of Roman Military Equipment Studies*» (Armatura Press հրատ., 1991–2003), «*Crusades*» (Ashgate հրատ., 2003–2014), «*Arms and Armour*», «*Waffen und Kostumkunde*», և այլն:

հանգստություն»՝ կապված ԽՍՀՄ փլուզման և նախկինում տիրապետող երկրենտ միջազգային անվտանգության համակարգի կազմալուծման հետ: Միջազգային հնչեղության ահաբեկչական գործողությունները, հատկապես 2001 թ. սեպտեմբերի 11-ը և դրան հաջորդած իրադարձություններն ավելի ուժեղացրին ընդհանուր անհանգստությունն այն շրջանակներում, որի մաս են կազմում ռազմի պատմության վերաբերյալ աշխատանքների հեղինակներն ու ընթերցողների մեծ մասը⁶:

Այժմ ընդհանուր դիտողություններից անցնենք գրախոսվող աշխատանքի կառուցվածքին: Երկու ծավալուն հատորներից առաջինը (կամ՝ էջ 1-370), բացի գրքի խմբագիրներ **Ալեքսանդր Սարանտիսի** (Քենտի համալսարան) և **Նեյլ Քրիստիի** (Լեյչեստերի համալսարան) գրեթե 20 էջանոց Նախաբանից և ընդարձակ ներածական հոդվածից («Ռազմի գործը ուշ անտիկ շրջանում», էջ 1-98)⁷, գրեթե ամբողջությամբ ներկայացնում է մոտավորապես մ.թ. 300 – 650 թթ. (Կոստանդին Մեծից մինչև Հերակլիոս) բյուզանդակենտրոն կամ ուշ Հռոմեական կայսրության և դրա անմիջական հարևանությամբ սկիզբված տարածքի ռազմական մշակույթին ու անցուդարձին վերաբերող ուսումնասիրությունների ցայժմ հրատարակված ամենաընդարձակ մատենագիտությունը:

Մատենագիտական հատվածին նախորդող հոդվածի հեղինակ **Քոնոր Ուեթլին** (Conor Whately, «Ուշ անտիկ շրջանի պատերազմը. ուսումնասիրություններ, գրավոր աղբյուրներ և նյութական վկայություններ», էջ 101-150) համառոտ ներկայացնում է ուշ անտիկ շրջանի ռազմի պատմության ուսումնասիրության պատմագրությունը, հիմնական արդյունքները և ընդգծում աղբյուրներում նկատվող տեղաշարժերը: Հաջորդ ավելի քան երկու հարյուր էջերը ներառում են հետևյալ բնագավառների վերաբերյալ ընդարձակ ցանկերով մատենագիտական ակնարկներ՝ «Հանդերձանք և զենք» (153-174), «Մարտավարություն» (177-206), «Ուշ հռոմեական զինվորականության կազմակերպությունն ու կենցաղը» (209-236), «Ռազմավարություն, դիվանագիտություն և սահմաններ» (239-252), «Արևմուտքի ամրաշինությունը» (255-294), «Աֆրիկայի ամրաշինությունը» (297-314), «Արևելքի ամրաշինությունը» (317-368): Բոլոր այս ակնարկները, որ կազմում են առաջին հատորի հիմնական բովանդակությունը, հեղինակել են խմբագիրները և Քոնոր Ուեթլին: Հասկանալի է, որ ինչպես այս հատորը, այնպես էլ ողջ ժողովածուն հետևում է Պևտինգերյան քարտեզի տրամաբանությանը, այսինքն՝ Հռոմն է ընդունվում աշխարհի կենտրոն⁸: Այսպես՝ ամրաշինության մասին երեք գլուխներից վերջինի՝ արևելյան ամրաշինության մասին գրականության ընդգրկման տարածքում ներառված են ոչ միայն Ատրիքի, Պաղեստինի և Անատոլիայի, Մեծ Հայքի արևմտյան մասի ու Լազիկայի կառույցները, այլև ստորին Դանուբի ամրաշինական գոտին, ինչը միանգամայն ճիշտ է պատմական աշխարհագրության տեսանկյունից: Չմանրամասնելով մատենագիտական այս հոդվածների բովանդակությունը՝

6 Մեկ այլ նոր միտում է նկատվում 1990-ականների կեսերից Եվրոպական Միության ընդարձակմանը զուգահեռ. Հռոմեական լիմեսը, որն արևմուտքից արևելք մի քանի հարյուրամյակ բաժանում էր Եվրոպան, իր դարավոր ազդեցությամբ հիմա դիտվում է որպես աշխարհամասի ժողովուրդների մշակույթները երբևէ միավորած մի առանցք, և համապատասխան համաեվրոպական ժառանգության բնութագիր է ձեռք բերում, տես http://limes2012.naim.bg/files/Limes%20Congress%202012_Programme_last.pdf

7 Ի տարբերություն հղվող մենագրությունների և հոդվածների վերնագրերի՝ գրախոսվող աշխատանքի հոդվածների վերնագրերն այսուհետ ներկայացվում են հայերեն թարգմանությամբ, իսկ հեղինակների անունն ու ազգանունը՝ նաև անգլերեն:

8 Տես **O. Dilke**, *Itineraries and Geographical Maps in the Early and Late Roman Empires*, in: *History of Cartography*, ed. by **J.B. Harley** and **D. Woodward**, University of Chicago Press, Vol. I, 1987, p. 234-257; **R. Talbert**, *Barrington Atlas of the Greek and Roman World: The Cartographic Fundamentals in Retrospect, Cartographic Perspectives*, 46 (Fall 2003), 4-27, նույնի՝ *The World in the Roman Traveler's Hand and Head*, in: *Vrajes y Visiones del Mundo*, **Rubio Tomar** et al. (eds), Madrid- Malaga: Ediciones Clasica and Canales 7, 2008, p. 109-28, նույնի՝ *Rome's World: The Peutinger Map Reconsidered*, Cambridge University Press 2010:

հատուկ անհրաժեշտ է ընդգծել, որ ներկայացված գրականությունը չի կարելի սպառնիչ ու ամբողջական համարել: Նկատի առնելով վերը նշված տևական հանրային հետաքրքրության դերը ռազմի պատմության բնագավառի աշխատանքներում և այն, որ դրանք արդեն մեծ թիվ են կազմում ոչ միայն Հռոմեական կայսրության նախկին արևմտյան տարածքներում, այլև հարավային և կենտրոնական Եվրոպայի սլավոնական երկրներում, Հունգարիայում, Ուկրաինայում, Ռուսաստանում, Հունաստանում, Թուրքիայում, Հայաստանում և Վրաստանում, անհնար է հուսալ, որ մեկ հատորի սահմաններում կարելի էր սպառել դրանց մատենագիտությունը: Հեղինակների ջանքերի հանդեպ ամենաբարեհաճ վերաբերմունքով հանդերձ՝ չի կարելի չնկատել առանձին կարևոր աշխատանքների բացակայությունը նրանց կազմած ցանկերում, ինչը ճիշտ է բացատրել որոշ շտապողականությամբ: Օրինակ՝ **Զ. Ուայքսի** ճանապարհների և հնավայրերի քարտեզներով համարված ընդարձակ հողվածք, անշուշտ, հեղինակներին ծանոթ լինելու դեպքում պետք է ընդգրկված լիներ գոնե արևելքի ամրաշինության ցանկում⁹: Ցավոք, կան շատ այլ կարևոր աշխատանքներ, որոնք կարծես ոչնչով չեն զիջում ցանկերում ներառվածներին, բայց հղված չեն ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ հատորում¹⁰:

Նկատված փոքր թերություններն արձանագրելով՝ միաժամանակ կարող ենք եզրակացնել. **առաջին**՝ մատենագիտական հատորի հողվածները ներկայացնում են թեմատիկ սկզբունքով կազմակերպված հարյուրավոր գիտական աշխատանքների վերնագրեր: Դրանք միջարկված են աշխատանքների խմբերը համառոտ ներկայացնող փոքրածավալ ներածականներով, որոնք հատկապես միտված են ռազմի պատմության համապատասխան ոլորտում առաջընթացը ցույց տալուն՝ 1980-2010-ականների գրականության մանրամասն վերլուծությամբ (նկատված բացառություններով հանդերձ): Երևում է կազմողների նախապատվությունը արևմտյան լեզուներով աշխատանքներին, իսկ դրանց մեջ՝ անգլերեն հրապարակումների գերակշռությունը: Վերջինների մեջ մեծ թիվ են կազմում հնագիտական տեղագնությունների, պեղումների, վերականգնումների մասին հաղորդումներն ու աշխատանքները: Ուշագրավ է նաև, որ այդ հողվածներում պարզորոշ դրսևորվել է 1980-ականներից ռազմի պատմության և հնագիտության վերաբերյալ աշխատանքների բազմապատկման միտումը, ինչն իր հերթին (և հենց գրախոսվող աշխատանքը դրա օրինակն է) հետևանք է 1950-ականներից հնագիտության ձեռք բերած ու արագորեն թարմացվող տեղեկությունների ու եզրակացությունների, որոնք էականորեն ընդարձակել են ավանդական ռազմի պատմագիտության սահմաններն ու հնարավորությունները: Հենց այս առումով է հատուկ ուշադրության արժանի առաջին հատորը, և այն որպես ինքնակրթության և աշխատանքի գործիք՝ կարող է մեծապես օժանդակել ռազմի պատմությամբ մասնագիտորեն զբաղվող ուսանողներին ու գիտնականներին: Ավաղ, ստիպված ենք առանձնահատուկ ընդգծել հայ հեղինակների առաջնահերթ կարևորության

9 Տե՛ս **J. J. Wikes**, The Roman Danube: An Archaeological Survey. The Journal of Roman Studies, Vol. 95 (2005), pp. 124-225.

10 Նշենք մի քանի ամենակարևորները՝ **William Aylward** (ed.), Excavations at Zeugma, volumes 1-3, The Packard Humanities Institute, Los Altos, CA, 2013, առկա է՝ zeughma.packhum.org; **Klaus-Peter Todt** and **Bernd Andreas Vest**, Tabula Imperii Byzantini, Band 15: Syria (Syria Prote, Syria Deutera, Syria Euphratesia), Institut für Byzantinistik und Neograezistik, Universitat Wien 2011 (TIB-ը մեր «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» նման է, բազմահատորյակից քչերն են հղված, սա վերջին համարն է, **R. Talbert**, ed. Barrington Atlas of Greek and Roman World, 2000-ից հետո տպագրված բոլոր համարներն էլ հատկապես արժեքավոր են ուշ անտիկ դարաշրջանի համար); The Economic History of Byzantium: From the Seventh Through the Fifteenth century, vol. I-II, ed. **Angeliki E. Laiou**, Dumbarton Oaks Research Library and Collection, Washington D.C. 2002 (ցամաքային և ծովային ուղիների, տնտեսության ճյուղերի մասին հողվածների մեծ մասում ժողովված են մեծաքանակ տվյալներ նաև ուշ անտիկ ռազմի պատմության հետ առնչվող իրողությունների վերաբերյալ):

աշխատանքների գրեթե իսպառ բացակայությունն այս ցանկերից, ինչին ավելի մանրամասն կանդորադառնանք ստորև՝ գրախոսականի վերջում կենտրոնանալով երկրորդ հատորի մաս կազմող հոդվածներից մեկի վրա (**James Howard-Johnston**):

Երկրորդ հատորը կրկնակի ընդարձակ է, ուստի ներկա գրախոսականի սահմաններում նրան մաս կազմող բոլոր տասնինը հոդվածներին անգամ երկու նախադասությամբ անդրադառնալ հնարավոր չէ: Դրա փոխարեն կարելի է համառոտ ներկայացնել՝ ինչ գլուխների է այն բաժանված, և ավելի մանրամասն խոսել այն հոդվածների մասին, որոնք պետք է որ հետաքրքրեն հայագետներին:

Առաջին բաժինը՝ «Ռազմավարություն և հետախուզություն», ունի մեկ հոդված՝ **Ջոն Հալդոնի** (John Haldon) «Տեղեկություն և պատերազմ. մեկնաբանություններ միջին բյուզանդական դարաշրջանի (մ.թ. 660–1025 թթ.) պաշտպանական ռազմավարության և տեղեկացման վերաբերյալ» (էջ 373–396): Հեղինակը ժամանակակից ամենահայտնի բյուզանդագետներից է, և նրա ցանկացած ներդրում ռազմի պատմության բնագավառում արժանի է ուշադրության¹¹: Այս մեկում ի մի են բերված վերնագրում նշված ժամանակահատվածի բյուզանդական ռազմի ձեռնարկների և այլ գրավոր սկզբնաղբյուրների վկայությունները այդ երկրի կողմից հարևանների մասին տեղեկությունների ձեռքբերման և դրանց հետագա՝ ռազմական կամ դիվանագիտական կիրառության հմտության ու առանձնահատկությունների մասին, որոնք բացակայում են հեղինակի մյուս աշխատանքներում¹²:

Երկրորդ բաժնի երկու հոդվածներում քննարկվում են ուշ անտիկ դարաշրջանի ամրաշինությունն ու պաշարողական պատերազմը: **Ջեյմս Գրոուն** (James Crow) «Ամրությունները և ուշ Հռոմեական արևելքը. քաղաքային պարսպից դեպի երկար պատեր» (էջ 397–430) հոդվածում ամփոփ ներկայացնում է Դանուբի ուղղությամբ Կոստանդնուպոլսի պաշտպանության համակարգը: **Մայքլ Ուիթբիի** (Michael Whitby) «Պաշարողական պատերազմը և հակապաշարողական մարտավարությունը ուշ անտիկ շրջանում (մոտ 250–640 թթ.)» (էջ 433–460) հոդվածը մանրամասն ներկայացնում է Սասանյանների դեմ Հռոմի և Կոստանդնուպոլսի մղած հարձակողական և պաշտպանական գործողություններն ըստ գրավոր սկզբնաղբյուրների:

«Ջենք և սպառազինություն» բաժինը սկսվում է հայտնի շոտլանդացի մասնագետ **Ջ.Ս.Ն. Գուլսթենի** հոդվածով (J.S.N. Coulsten, «Ուշ հռոմեական սպառազինության մշակույթը», էջ 463–492), որով ավելի է ընդարձակվում նույն հեղինակի՝ հռոմեական զենքի և հանդերձանքի վերաբերյալ նախորդ հրատարակություններում արծարծված հարցերի շրջանակը, ի մի են բերված փաստեր խնդրո առարկա դարաշրջանում կայսերական լիմենների գոտուց հարյուրավոր կիլոմետրեր հեռու դրանց տարածման և ազդեցության մասին¹³: Հայտնի է դառնում նյութական մշակույթի այս տարրերի բավական խիտ սփռվածությունը մինչև հարավ-արևմտյան հարթավայրեր և հարավ-սկանդինավյան գոտի, ընդհուպ Բալթ-

11 Գլխավոր աշխատանքներից կարելի է նշել հետևյալ երկուսը՝ **John Haldon**, *Warfare, State and Society in the Byzantine World, 565–1204*, UCL Press: London 1999; *ibid.* *Byzantium at War*, A.D. 600–1453, Osprey Publishing: London 2003:

12 Տե՛ս **Бартикан Р. М.**, «О двух византийских военных терминах восточного происхождения», «Լրաբեր հաս. գիտ.», 1970, N 8, էջ 67–77.

13 **Ջ. Գուլսթենը** և **Մ. Բիշոփը** (M.C. Bishop) երկար համագործակցել են վերջինի կողմից նախաձեռնված «*Journal of Roman Military Equipment Studies*» գիտական ամսագրի հրատարակման գործում (1991–2001), իսկ 1993 թ. միասին հեղինակել են «Հռոմեական սպառազինությունը պունական պատերազմներից մինչև Հռոմի անկումը» (*Roman Military Equipment: From the Punic Wars to the Fall of Rome*, Oxbow Publishing) արժեքավոր աշխատությունը, վերահրատ.՝ 2006 թ.:

յան ծովեզերք¹⁴: Եթե հիշենք հայկական աղբյուրներում վկայված «վարանգ»-ների ներգրավվածությունը 10-րդ և 11-րդ դարերի բյուզանդական բանակներում, որին հաջորդեցին նորմանների էթնիկական միջուկի վրա հիմնված խաչակրաց արշավանքները, այս աշխատանքը նույնպես կարևոր նկատառումներ է հաղորդում հայագիտությանը¹⁵:

Միշել Կազանսկու հոդվածը («Բարբարոսների սպառազինությունը և դրա զարգացումը ուշ հռոմեական և Մեծ գաղթի դարաշրջանում (2-րդ-5-րդ դդ.)», էջ 493-522) խիստ համառոտ ամփոփում է հեղինակի գրեթե երկու տասնամյակ շարունակվող ուսումնասիրությունները հյուսիսսևծովյան գոտու քոչվոր, կիսաքոչվոր և երկրագործական բնակչության ու նյութական մշակույթի, հատկապես սպառազինության ոլորտում վաղ բյուզանդական կամ ուշ հռոմեական կայսրության բնակչության հետ նրանց սերտ առնչությունների վերաբերյալ: Գերմանաբալթյան, տափաստանային և անտառային-սլավոնական գոտիներից ծագող հնագիտական գտածոները ներկայացված են հոդվածին ուղեկցող տասներկու պատկերաթերթերի վրա: Հյուսիսային Դանուբից մինչև Հյուսիսային Կովկաս տարածքն ընդգրկող այս նյութն ուղեկցվում է մանրամասն նկարագրություններով և մեկնաբանություններով, բավական առատ հղված են արևելամերձկասկան և ռուս կամ խորհրդային հնագետների աշխատանքները: Այսուհանդերձ, սա խիստ փոքրածավալ աշխատանք է Ժողովուրդների մեծ գաղթի ուղու արդեն վերծանված հնագիտական իրադրության մասին շատ թե քիչ ամբողջական պատկերացում ստանալու համար: Հետաքրքրվողներին կարելի է հանձնարարել առաջնորդվել ոչ միայն այս աշխատանքով, այլև նույն հեղինակի մի քանի այլ աշխատանքներով¹⁶: Նույն բաժնում զետեղված վերջին հոդվածի հեղինակը **Ջոն Քոնյարդն** է (John Conyard, «Ուշ հռոմեական բանակի վերակերտումը», էջ 523-568) հնագիտական գտածոների և զանազան աղբյուրների ու փորձարարական հնագիտության օգնությամբ հռոմեական զինատեսակների, զրահի, վահանի, հանդերձանքի վերականգնման արդյունքների համառոտ, բայց խիստ հետաքրքրական շարադրանքով:

«Գրավոր աղբյուրներ և տեղագրություն» բաժնի առաջին աշխատանքը՝ **Յան Բովվինի** (Jan Colvin) «Ճակատամարտերի նկարագրությունը և ռազմի գործողությունների բացատրությունը Պրոկոպիոսի և Ագաթիասի երկերում՝ դասական ոճի պատմիչների կողմից պաշտոնական զեկուցագրերի օգտագործումը որպես սկզբնաղբյուր» (էջ 571-598), խիստ հետաքրքրական է մեթոդաբանական առումով: Ավելի կարևոր են թվում հաջորդ երկու հոդվածները՝ «Պրոկոպիոսը 530 թ. Դարայի և 537-538 թթ. Հռոմի ճակատամարտերի մասին՝ գրավոր հաղորդումների տեղայնացում» (Christopher Lillington-Martin, էջ 599-630), և «Ամմիանոս Մարկելիխոսը և մ.թ. 363 թ. Մծբինի անձնատվությունը» (Susannah Belcher, 631-652): Սրանց կարևորությունը կայանում է ոչ միայն մեթոդաբանական հետաքրքիր

14 Տե՛ս նաև՝ Beyond the Roman Frontier: Roman Influences on the Northern Barbaricum, ed. by **Thomas Grane**, Analecta Romana Instituti Danici Supplementum XXXIX, Rome: Edizioni Quasar 2007.

15 Տե՛ս **Georgios Theotokis**, Rus, Varangian and Frankish Mercenaries in the Service of Byzantine Emperors (9th - 11th C.): Numbers, Organization and Battle Tactics in the Operational Theatres of Asia Minor and the Balkans, Byzantina Symmeikta, 22 (2012), 125-156:

16 Տե՛ս **М.М. Казанский**, Древности постгуннского времени на юге Восточной Европы и англосаксы. Scripta Antiqua, 1 (2011), 27-49; **М.М. Казанский** и **А.В. Мاستыкова**, Кочевые и оседлые варвары в Восточной Европе в гуннскую эпоху, Дивногорский сборник, 1 (2009), 225-251; **Igor Gavritukhin** and **Michael Kazanski**, Bosphorus, the Tetraxite Goths, and the Northern Caucasus Region during the Second Half of the Fifth and the Sixth Centuries, in: Neglected Barbarians, ed. by **Florin Curta** (Studies in the Early Middle Ages 32), Brepols 2010, 83-136: Զարմանալիորեն հղված չգտանք նաև հետևյալ հիմնարար աշխատանքը՝ **Симоненко А.В.**, Сарматские всадники Северного Причерноморья, СПб., факультет филологии и искусств Санкт-Петербургского государственного университета, 2009.

լուծումներում (հատկապես **Լիլինգթոն-Մարտինի** հողվածում դրանք փոքր-ինչ համարձակ են թվում), այլև շատ վաղուց քննարկված պատմական իրողություններին նորովի տրված տրամաբանական գնահատականներում, որպիսիք միանգամայն իրավաչափ են ռազմի աղբյուրագիտության առկա նվաճումները նկատի առնելու դեպքում:

Հաջորդ չորս բաժինները կազմակերպված են աշխարհագրական սկզբունքով՝ փաստորեն ներառելով տասը առանձին հողված՝ երկրորդ հատորի կեսից ավելին: «Արևմուտքը» վերնագրի տակ ներկայացված են **Հյու Էլթոնի** «Կայսերական պատերազմները Դիոկղետիանոսից Հոնորիոս. մ.թ. 284–423 թթ. Հռենոսի սահմանը և արևմտյան նահանգները» (Hugh Elton, էջ 655–682), **Մայքլ Կուլիկով-սկիի** «Պատերազմի հնագիտությունը և 5-րդ դարի «ներխուժումները»» (Michael Kulikowski, էջ 683–702) և **Օրիել Օլեստիի** գլխավորությամբ վեց համահեղինակների՝ «Պիրենեյան լեռների վերահսկումը՝ մակակայի ուշ անտիկ դիաթադումը Հուլիա Լիբիցայում (Լիբիա, Լա Սերդանյա, Իսպանիա)» (Oriol Olesti et al., էջ 703–734) հողվածը:

Հաջորդ՝ «Բալկաններ» բաժնում տեղ են գտել **Ջոն Վիլքսի** «Պատերազմի հնագիտություն. հարավ-արևմտյան Բալկանների տարածքային անվտանգության ապահովումը մ.թ. 3–6-րդ դդ.» (John Wilkes, էջ 735–758), **Ալեքսանդր Սարանտիսի** «Ռազմական բախումները և դիվանագիտությունը հյուսիսային Բալկաններում Անաստասիոսի և Հուստինիանոսի օրոք» (Alexander Sarantis, 759–808) և **Ֆլորին Կուրտայի** «Հեծյալներ ամրոցներում, թե շինականներ գյուղերում. դիտարկումներ 6–7-րդ դդ. Բալկանների ռազմի հնագիտության» (Florin Curta, էջ 809–852) հողվածները:

Մեր տարածաշրջանին ավելի մոտ են «Արևելք» բաժնի հողվածները, հատկապես հայտնի բյուզանդագետ **Ջեյմս Հովարդ-Ջոնսթոնի** «Հայկական Տավրոսից հյուսիս և հարավ տարածվող հռոմեական նահանգների ռազմական ենթակառուցվածքը ուշ անտիկ շրջանում» (James Howard-Johnston, էջ 853–892), որին, ինչպես նշվեց, նվիրված են այս գրախոսության վերջին էջերը: Դրան հաջորդում է **Բոնոր Ուեյթլիի** «Էլ-Լեջուն. Հռոմի արևելյան սահմանի մատակարարումը և տեղայնացումը 6-րդ դարում» (Conor Whately, էջ 893–926): Հիշեցնենք, որ Հռոմեական արևելքին են վերաբերում նաև սույն գրքի նախորդ հողվածներից շատերը:

Վերջին՝ ավարտական բաժնի երկու հողվածները վերաբերում են ուշ անտիկ դարաշրջանում Հռոմեական կայսրության տարածքում հաճախակի դարձած քաղաքացիական և վերանվաճման պատերազմներին: Երկհատորյակի խմբագիրներից **Նեյլ Քրիսթին** հեղինակել է այս բաժնում զետեղված «Պատերազմները սահմաններից ներս. ապստամբության, խռովության և քաղաքացիական պատերազմի հնագիտությունը» (Neil Christie, 927–968), իսկ **Մարիա Կուրումալին**՝ «Իտալիայի վերանվաճումը Հուստինիանոսի օրոք. կայսերական բանակի գործողությունները և տեղական արձագանքները» (Maria Kouroumali, էջ 969–998):

Հատորն ավարտվում է հողվածների բովանդակության ֆրանսերեն համառոտագրություններով և տեղանունների, անձանունների ու ռազմի եզրերի բացանկով:

Անփոփելով գրախոսության նկարագրական մասը՝ կրկնենք, որ այս աշխատանքը, բացի անուրանալի գիտական արժանիքներից, կարող է հիանալի ուղեցույց ծառայել ռազմի պատմության արդի գլխավոր միտումներին ու նվաճումներին ծանոթանալ ցանկացողներին:

Վերջում անհրաժեշտ ենք համարում կերպով անդրադառնալ աշխատանքի նշանակությանը՝ **հայագիտական առումով**, քանի որ ռազմի պատմության ուսումնասիրությունը խթանող վերը նշված հանգամանքներին մեր դեպքում ավելանում է նաև հայոց պետականության և բանակի վերականգնմամբ մեծացած հասարակական ուշադրությունը հայոց ռազմի պատմության հանդեպ:

Որքան փոքր թվա հայագետների սերունդների ներդրումը ռազմի պատմության և հատկապես, լայն առումով՝ հայագիտության ոլորտներում, մեր կարծիքով, այն արդեն լրացրել է նյութի քանակական կուտակման շրջափուլը, և առաջիկայում կարող ենք մեր ժողովրդի անցյալում ունեցած դերակատարությանը համամասն ներդրում ակնկալել մեր երկրի տարածքով անցնող Արևմուտքի և Արևելքի դարավոր ռազմական դիմակայության ամենակարևոր բաղադրիչների ուսումնասիրության գործում:

Չի կարելի չնկատել, որ կան այս ուղղությամբ առաջընթացին խանգարող հանգամանքներ, որոնցից մեկն էլ արտերկրում հայոց ռազմի պատմության ուսումնասիրությանը նպաստ բերած մեծ թվով հեղինակների գործերին մեր պարզ անտեղյակությունն է: Նման քիչ ծանոթ հեղինակներից է **Ջեյմս Հովարդ-Ջոնսթոնը**, Օքսֆորդի համալսարանի վաստակավոր բյուզանդագետներից, ով դեռևս 1992 թ. հայտնի հայագետ **Ռոբերտ Թոմսոնի** հետ հրավիրված է եղել մասնակցելու Սերեոսի երկի անգլերեն երկհատոր թարգմանությանը Լիվերպուլի համալսարանի «Թարգմանված տեքստեր պատմաբանների համար» (Translated Texts for Historians = TTH) շարքի համար¹⁷: Թերևս այս աշխատանքն էր, որ նրա հայագիտական և ռազմի պատմության ավելի վաղ դրսևորված հետաքրքրությունների հետ միասին, պատճառ դարձավ Սերեոսի պատմությանը զուգահեռ՝ «Հերակլիոսի պարսկական արշավանքները և Արևելյան Հռոմեական կայսրության վերականգնումը 622-630 թթ.» հոդվածի լույս ընծայման¹⁸: Դրանում հեղինակը խոստացել էր ավելի հանգամանորեն անդրադառնալ Սասանյանների և Բյուզանդիայի վերջին պատերազմին, սակայն դա դեռ չի արել՝ միգուցե հաշվի առնելով դարակազմիկ այդ իրադարձության մասին մեծ թվով նոր հրատարակումների ի հայտ գալը և դեռևս բացահայտման կարոտ բազում այլ հանգամանքների առկայությունը¹⁹:

Միջանկյալ այս տարիներին **Ջ. Հովարդ-Ջոնսթոնն**, այնուամենայնիվ, երկու գիրք հրատարակել է: Դրանցից հատուկ հետաքրքրություն է ներկայացնում առաջինը, որտեղ ժողովված են 1980-2000-ական թթ. նրա հիմնական հոդվածները²⁰: Երկրորդը աղբյուրագիտական բնույթի ծավալուն հետազոտություն է,

17 Տե՛ս The Armenian History attributed to Sebeos, translated, with notes, by **R. W. Thomson**, historical commentary by **James Howard-Johnston**, with assistance from Tim Greenwood, TTH 31), vol. 1-2, Liverpool University Press: Liverpool 1999.

18 Տե՛ս **James Howard-Johnston**, Heraclius' Persian Campaigns and the Revival of the East Roman Empire, 622-630, War in History 1999, 6, 1-44: Անկեղծորեն շնորհակալ ենք Միչիգանի Դիքոնսի համալսարանի Հայկական հետազոտությունների ծրագրի ղեկավար Արա Սանջանին այս հոդվածի օրինակն ուղարկելու համար:

19 Այսպես՝ **Ջ. Հովարդ-Ջոնսթոնի** վերականգնման որոշ թերություններն ընդգծվեցին արդեն մի քանի տարի անց՝ **Constantin Zuckerman**, Heraclius in 625, Revue des études byzantines, tome 60, 2002, pp. 189-197, **Frank Trombley**, Military Cadres and Battle during the Reign of Heraclius, **The Reign of Heraclius (610-641): Crisis and Confrontation**, ed. G.J. Reinink and B.H. Stolte. Leuven: Peeters Publishers 2002, pp. 241-260: Իսկ 2003 թ. հրատարակվեց մեկ այլ հայտնի բյուզանդագետի՝ Հերակլիոս կայսեր պատերազմներին նվիրված մենագրությունը, որը հավելյալ հարցեր էր առաջադրում՝ **Walter Emil Kaegi**, Heraclius: Emperor of Byzantium, Cambridge University Press 2003: Վերջին հեղինակի աշխատանքներից 7-րդ դարին է վերաբերում և պակաս կարևոր չէ նաև՝ Muslim Expansion and Byzantine Collapse in North Africa, Cambridge University Press 2010, հատկ.՝ էջ 41-115, 166-199, հմմտ. նաև՝ **Tim Greenwood**, Armenian neighbours (600-1045), The Cambridge History of the Byzantine Empire, ed. **J. F. Shepard** (CUP 2008), pp. 333-346.

20 Ստորև ներկայացնում ենք **James Howard-Johnston**, East Rome, Sasanian Persia and the End of Antiquity, Historiographical and Historical Studies, Aldershot: Ashgate 2006, ժողովված նույն հեղինակի հոդվածները հերթականությամբ և ըստ նախորդ հրատարակության՝ 1. The two great powers in Late Antiquity: a comparison, The Byzantine and Early Islamic Near East. III: States, Resources and Armies, ed. **A. Cameron**. Princeton, NJ: The Darwin Press, Inc., 1995, pp. 157-226, 2. **Procopius**, Roman defences north of the Taurus and the new fortress of Citharizon, The Eastern

որով հեղինակը համոզիչ կերպով ցրում է 7-րդ դարի պատմագրության աղքատիկ լինելու մասին պատկերացումը, հիմնավորում է հատկապես արևելյան սկզբնաղբյուրների, այդ թվում՝ արաբական ու շաղբյուրների կարևորությունը և ամփոփ ներկայացնում մոտ երեք տասնյակ սկզբնաղբյուրներ²¹:

Բայց այս երկու գրքերն էլ 1999 թ. նշված հոդվածում խոստացված մանրամասնություններ չեն պարունակում, ուստի, հարմարվելով հեղինակի աշխատանքին, ավելի ստույգ՝ հիմնականում 40–50 էջ ծավալով հոդվածների միջոցով արտահայտվելու նախասիրությանը, հարկ ենք համարել այս կերպ արձագանքել նրա կարևոր ձեռքբերումներին և ոչ պակաս ակներև բացթողումներին, որպիսիք **Ջ. Հովարդ-Ջոնսթոնը** կիսում է արտերկրի տասնյակից ոչ պակաս հայ ռազմի մասնագետների հետ:

Բանն այն է, որ ուշ անտիկ դարաշրջանում շատ մեծ էր Հայաստանի և հայերի մասնակցությունը առանցքային նշանակության ռազմական անցքերին ինչպես հայրենիքում, այնպես էլ նստակյաց երկրների գրեթե ողջ պարագծով՝ Եգիպտոս, Պաղեստին, Ասորիք, հարավային Միջագետք, Ապար աշխարհ, Կովկաս, Գրիմ, Թրակիա: Այս ընդգրկուն աշխարհագրությանը հայերի առնչության մանրամասները ցրված են տասնյակ աշխատանքներում, որոնց վրա հղում կատարելը գրախոսականի նպատակների մեջ չի մտնում²²: Մինչ դրանց շատ հեղինակների ուշադրությունը սևեռված է նույն դարի մյուս կարևոր իրադարձությունների՝ Մասանյանների կործանման և արաբական տերության սրընթաց վեր խոյացման փաստերի ու մեկնաբանությունների վրա, **Ջ. Հովարդ-Ջոնսթոնի** գրեթե բոլոր հոդվածներում հարուստ նյութերի հիման վրա քննվում են հիմնականում Մեծ Հայքին առնչվող կարևոր հարցեր՝ պատմական լայն հորիզոնով: Այսպիսին է նաև նրա նախավերջին՝ 2012 թ. փոքրածավալ հետազոտությունը ուշ Մասանյան քանակի կառուցվածքի, քանակի, մարտական որակի և զորահավաքման համակարգի մասին²³: Դրանում հեղինակը հնագիտական և աղբյուրագիտական գտածոների և փաստերի լայն շրջանակի մեջ է փորձում զետեղել նաև հայ պատմիչների, հատկապես իրեն քաջածանոթ Սեբեոսի հաղորդած տեղեկությունները:

Այսպիսով, գրախոսվող երկհատորյակում տեղ գտած հոդվածը հեղինակի

Frontier of the Roman Empire (BAR Int. Ser. 553), ed. **D.H. French** and **C.S. Lightfoot**. Oxford: British Archaeological Reports, 1989, pp. 203–229, 3. Byzantine Anzitone, Armies and Frontiers in Roman and Byzantine Asia Minor (BAR Int. Ser. 156), ed. **S. Mitchell**. Oxford: British Archaeological Reports, 1983, pp. 239–288, 4. The official history of Heraclius' Persian campaigns, The Roman and Byzantine Army in the East, ed. **E. Dqbrowa**, Krakow: Drukarnia Uniwersytetu Jagielloiiskiego, 1994, pp. 57–87, 5. Armenian historians of Heraclius: an examination of the aims, sources and working-methods of Sebeos and Movses Daskhurantsi, The Reign of Heraclius (610–641): Crisis and Confrontation, ed. **G.J. Reinink** and **B.H. Stolte**. Leuven: Peeters Publishers 2002, pp. 41–62, 6. Al-Tabari on the last great war of Antiquity (միայն այս ժողովածուում՝ 22 էջ), 7. The siege of Constantinople in 626, Constantinople and its Hinterland, ed. **C. Mango** and **G. Dagron**. Aldershot: Ashgate 1995, pp. 131–142, և 8. Տե՛ս ծգր. 17: Ժողովածուից հետո հրատարակվել է ևս մի կարևոր ներդրում՝ **Howard-Johnston**, «Byzantium and Its Neighbours», **E. Jeffreys, J. Haldon & R. Cormack**, ed., Oxford Handbook of Byzantine Studies (Oxford, 2008), pp. 939–56.

21 Տե՛ս Non vidi, ըստ՝ **Treadgold, Warren**, The Darkness of the Seventh-Century Near East (Review on: **James Howard-Johnston**, Witnesses to a World Crisis: Historians and Histories of the Middle East in the Seventh Century (Oxford: Oxford University Press, 2010), International Journal of the Classical Tradition, Vol. 18, No. 4, December 2011, pp. 579–592.

22 Վերջին աշխատանքներից, որում նման հղումներ կան, տե՛ս **Armen Ayvazyan**, The Armenian Military in the Byzantine Empire: Conflict and Alliance under Justinian and Maurice, Alfortville: Sigest 2012, pp. 27–30, **Tim Greenwood**, Armenia, Oxford Handbook of Late Antiquity, ed. **Scott Fitzgerald Johnson**, Oxford UP 2012, 115–119:

23 Տե՛ս **James Howard-Johnston**, The Late Sasanian Army, Late Antiquity: Eastern Perspectives, ed. by Teresa Bernheimer and Adam Silverstein, The Gibb Memorial Trust 2012, pp. 87–126: Հմմտ.՝ **Владимир Дмитриев**, Всадники в сверкающей броне: Военное дело сасанидского Ирана, СПб.: Петербургское Востоковедение, 2008:

հերթական, ժամանակագրորեն վերջին հիմնավոր ներդրումն է, որը կարելի է դիտարկել հայագիտական տեսանկյունից, մասնավորապես՝ որպես Հերակլիոս կայսեր պարսկական արշավանքների կամ մեզանում «Խաչվերաց պատերազմ» անունով հայտնի ռազմական գործողությունների պատմաաշխարհագրական միջավայրի համակարգված ուսումնասիրության փորձ²⁴:

Ինչպես հայտնի է, պատմական աշխարհագրությունը հայագիտության ուժեղ, եթե չասենք՝ գերակշռող կողմերից կամ բաղադրիչներից մեկն է: Այս ոլորտում հայ մասնագետին հետաքրքրող ներդրում ունենալու համար պետք է բավական փորձառություն է սկզբնաղբյուրների իմացություն դրսևորել, ինչը օտարերկրացի հազվադեպ հայագետների է հաջողվել, և **Զ. Հովարդ-Ջոնսթոնի** միայն մեծ վերապահումով կարելի է դասել նրանց շարքը: Ակնհայտ է, որ հեղինակին ծանոթ չեն հատկապես անցյալ դարի վերջին քառորդում հայերեն գիտական պարբերականների միջոցով այս ոլորտում արված ներդրումները: Նկատենք թեկուզ **Հայկ Հակոբյանի**՝ Հռոմեական կայսրության արևելյան սահմանային գոտու մասին ուսումնասիրությունը, որով նա կարևոր լրացումներ է արել **Թիմ Միթֆորդի** և այլ արևմտյան ուսումնասիրողների աշխատանքներին՝ լայնորեն օգտվելով հայերեն սկզբնաղբյուրների հնարավորություններից²⁵: Նույն առումով խիստ կարևոր են **Քաբլեն Հարությունյանի** աշխատանքները 7-րդ դարի «Աշխարհացույցի» բովանդակած տեղեկությունների ձգբրտման ուղղությամբ՝ դրանից վաղ, ժամանակակից կամ ավելի ուշ հայ և օտար աղբյուրների տրամադրած լրացուցիչ տվյալների հիման վրա²⁶: Թեև ցավալի է այս, ինչպես նաև այլ չնշվող ներդրումներին **Զ. Հովարդ-Ջոնսթոնի** անտեղյակությունը, նրա վերաբերմունքը հայկական նյութին, հատկապես սկզբնաղբյուրներին, բավական ուշադիր է և նպատակամղված²⁷: Տարածաշրջանի պատմության մյուս աղբյուրներին, այդ թվում՝ հնագիտական, կնքագիտական, դրամագիտական և այլ ուղղություններով նոր հայտնագործություններին բավարար ծանոթությունը թույլ է տվել նրան որոշ պատասխաններ առաջարկել Բյուզանդիոնի և Տիգրանի բազմադարյա հակամարտության ենթակառուցվածքների մասին պատմագիտությանն արդեն վաղուց հետաքրքրող հարցերին:

Այս հարցադրումների առումով հեղինակի վերջին երկու ընդարձակ հոդվածները (ծգր. 22 և 23) խիստ մոտ են միմյանց, և, թերևս, ձիշտ է դրանք դիտել որպես հավելված 1999 թ. հոդվածին կամ 2006 թ. հոդվածների ժողովածուին (նույնիսկ եթե դրանք նախապատրաստում են իր խոստացած ծավալուն աշխատանքը): Դրանցում շարադրված փաստերը թույլ են տալիս նախ՝ ծանոթանալ ռազմի պատմության տեսանկյունից տարածաշրջանի ընդհանուր պատմությունից ծաղկաբաղված փաստերի, ու նաև՝ **Զ. Հովարդ-Ջոնսթոնի** սեփական եզրակացությունների հետ, որոնք առանձին դեպքերում նվազ զգուշավոր կլինեին, եթե

24 Նորից տալիս ենք գրախոսվող ժողովածուում այս աշխատանքի հղումը՝ **James Howard-Johnston**, *Military Infrastructure in the Roman Provinces North and South of the Armenian Taurus in Late Antiquity, War and Warfare in Late Antiquity: Current Perspectives* (2 volumes: Late Antique Archaeology 8.1-8.2), ed. by **Alexander Sarantis** and **Neil Christie**, Brill: Leiden-Boston 2013, 853-891:

25 Տե՛ս **Հակոբյան Հ.**, Մեծ և Փոքր Հայքերի սահմանագլխի հռոմեական ամրությունների համակարգը, ՊԲՀ, 1986, N 4, 138-155:

26 Տե՛ս **Քաբլեն Հարությունյան**, Հայ Արշակունիների ձեռնարկի իշխանության կալվածքների հարցի շուրջ, ՊԲՀ, 1988, N 3, 56-67, 4, 44-60: Որոշ վերապահումով նաև՝ նույնի Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացույցի», մաս Ա (արևմտյան և հարավային աշխարհներ), Եր., ԵՊՀ հրատ. 2001:

27 Այսպես՝ Սերեոսի անգլերեն թարգմանության ծանոթագրություններում հաճախակի հղումներ կան Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանին, Ղուկաս Ինձիճեանի, Ալիշանի, Նիկողայոս Ադոնցի, Հակոբ Մանանդյանի, Ռոբերթ Հյունի և այլոց աշխատանքներին, ինչը հայոց պատմական աշխարհագրությանը հեղինակի բավարար ծանոթության ապացույց է:

հեղինակը ծանոթ լիներ նույն ոլորտում հայագիտության վերջին տասնամյակներում արձանագրած առաջխաղացմանը:

Մասնավորապես՝ ուշ Մասանյան բանակի ենթակառուցվածքների մասին 2012 թ. հոդվածում հեղինակը ամփոփ ներկայացրել է Մասանյանների արևելյան պաշտպանական ամրաշինությունը՝ Վրկանում վերջերս պեղված զորակայաններով: Դրան հաջորդող դիտարկումներից է Ատրպատականի Գանձակում և դրա հարևանությամբ շինությունների ոչ թե կամ ոչ միայն ամառանոցային, այլև զորակայան-ձամբարային գործառնության մասին ենթադրությունը, որը կարող է լուրջ համոզմունք դառնալ, եթե ընթերցողը հաշվի առնի այս խնդրո շուրջ, օրինակ՝ Բարկեն Հարությունյանի վերը հղված հոդվածներում առկա դիտարկումները, որոնց համաձայն՝ 298-363 թթ. հարավարևմտյան Ատրպատականի հենց այս բնակավայրերն են եղել սահմանային հայ Արշակունիների և պարսիկ Մասանյանների տիրույթների միջև:

Ջ. Հովարդ-Ջոնսթոնը չի թաքցնում, որ այս պրպտումներում իրեն հետաքրքրող գլխավոր հարցը հին աշխարհի երկու գերտերությունների տևական, մաշող մրցակցության ոչ թե պատճառների, այլ հնարավորության հարցն է, դրանց ենթակառուցվածքային ապահովումը, ռազմավարությունը և դրանից բխող այլ, ավելի փոքր հարցեր: Այս հարցադրումները նաև հայագիտական են: Արշակունյաց անկումից հետո Մեծ Հայքը երկու անգամ տարբեր գծերով բաժանվեց երկու գերտերությունների միջև, ինչը մեզանում դեռևս ռազմաաշխարհագրական բացատրություն չի ստացել: Այլ կերպ ասած, մեզ ցայժմ բավարարել է Հայաստանի՝ երկու հարևանների միջև կովախնձոր և ռազմի թատերաբեմ լինելու փաստի արձանագրումը, մինչդեռ պատմագիտությունը պետք է փորձի ոչ միայն բնութագրել, այլև նկարագրել և մեկնաբանել այդ կարգավիճակը, տեսնել՝ ինչպես է դա գործել, ինչքան է այդ ամենը ազդել հայոց վրա, այդ թվում՝ ստեղծելով հայոց հայտնի անմիաբանությունը:

Ավաղ, մանրամասներով հարուստ չեն վերջին հոդվածում բերված քարտեզ-գծապատկերները, որոնցով (օր.՝ էջ 875, գծ. 4) խիստ մակերեսային է ներկայացվում Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածը²⁸, և թերի են լուսաբանվում ենթակառուցվածքային այն փոփոխությունները, որոնք տեղի ունեցան Մեծ Հայքի 387 թ. առաջին բաժանումից հետո, պայմաններ նախապատրաստելով 591 թ. երկրորդ բաժանման համար: Նկատի ունենալով, որ 400-ականներին երկու ոչ մեծ բախում է միայն արձանագրվել Մասանյան և Հռոմեական կայսրությունների միջև (420-421 և 441 թթ.), նշված փոփոխությունների հիմնական մասը տեղի է ունեցել 503-628 թթ. ռազմական դիմակայության պայմաններում: Այդ շրջանի հինգ մեծ պատերազմների միջև ընկած հռոմեական ամրաշինական գործունեության մեծ թվով դրվագներ ներկայացված են Պրոկոպիոս Կեսարիացու և այլ ժամանակակից պատմիչների գործերում՝ առատորեն հղված գրախոսվող երկհատորյակում տեղ գտած հոդվածում²⁹: Հուստինիանոսի դարաշրջանի վրա այս շեշտադրումը թեև մի փոքր ստվերում է թողնում 5-րդ դարը (հետևյալ կարևոր տեղաշարժերով՝ Արշակունիների վերջնական բարձում, հայոց վերջնական ներքաշում արևմտյան քրիստոնյա հարևանի ազդեցության գոտի, Հռոմեական կայսրության մայրաքաղաքի վերջնական հաստատում Կոստանդնուպոլսում, մագ-

28 Այս գծաքարտեզները կազմելիս **Ջ. Հովարդ-Ջոնսթոնն** ի թիվս այլոց օգտվել է մի սկզբնաղբյուրից, որը կարող է անծանոթ լինել մեր պատմական աշխարհագրության մասնագետներին և պարունակել տվյալներ, որոնք չկան Թուրքիայում տեղանունների փոփոխություններից առաջ կազմված այլ քարտեզներում և սկզբնաղբյուրներում: Ուստի հղում ենք հետևյալ բրիտանական ձեռնարկին՝ առանց այն տեսնելու. Naval Intelligence Division (1942-1943) Geographical Handbook Series, Turkey, 2 volumes, Oxford 1942-1943.

29 Ինչպես նաև՝ **Geoffrey Greatrex** and **Samuel N. Lieu** (ed. and compilation), The Roman Eastern Frontier and the Persian Wars, part II: 363-630, a narrative sourcebook, Routledge: L. - N.Y. 2002 քրեստոնաստիայում՝ այլևայլ մանրամասներով:

դական շարժում և պարթևական ազնվականության վերջնական համախմբում Սասանյան արքայից արքայի շուրջ)՝ որպես հաջորդիվ իրականացած աշխարհակալությունների ճակատագրական բախման նախերգանք, կարևոր առումներով լրացնում է դեռևս Ն. Ադոնցի կողմից հայոց վաղ միջնադարին վերագրված առանցքային պատմական նշանակության մեր ընկալումները:

Այսուհանդերձ, պատերազմներով հարուստ այս դարաշրջանի վերաբերյալ **Զ. Հովարդ-Ջոնսթոնի** դիտողությունները ուշագրավ կերպով թարմացնում են Հայկական լեռնաշխարհի ռազմավարական նշանակության մասին մեր պատկերացումները: Նախ՝ իրավացիորեն նկատված է, որ 387 թ. սահմանը՝ Կարին-Թեոդոսիոպոլսով, խոցելի էր թողնում Բյուզանդիայի դեմ ռազմական գործողությունների անատոլիական ուղղությունը, ինչից անվարան օգտվում էին Սասանյանները՝ Մծբինի և Գանձակի զորակայաններից իրականացնելով գարնանային ներխուժումներ: Թեև այս վտանգը բյուզանդացիները գիտակցեցին և Հուստինիանոսի ռազմական բարեփոխումների միջոցով փորձեցին այն կանխարգելել դեռևս 530-ականներին, 610 և 620-ականներին Խոսրովի բանակները դյուրությամբ օգտագործում էին Մեծ Հայքի տարածքը Փոքր Ասիա մեծ բանակներով ներթափանցման համար: Այս իրադրության **Զ. Հովարդ-Ջոնսթոնի** մանրակրկիտ վերլուծությունը ցույց է տալիս, որ 591 թ. սահմանը, որն, ի դեպ, 720-ականներից դարձավ նաև Բյուզանդիայի և խալիֆայի սահման, ընկալվում էր որպես պաշտպանական անհրաժեշտություն: Նույն վերլուծությունից հայտնի է դառնում, թե ինչ ծանր վիճակում էր հայտնվել Բյուզանդիան Հայաստանի՝ որպես ինքնուրույն խոշոր ռազմական պատնեշի՝ Սասանյանների հետ համաձայնեցված կազմաքանդումից հետո (թեև հնարավորություն էր ստացել տնօրինելու երկրի տարածքն ու մարդկային ներուժը): **Այսինքն՝ գործ ունենք 11-րդ դարի երկրորդ կեսին արդեն թուրք-սելջուկյան ներխուժումների շրջանում հայտնի իրավիճակի մի նախադեպի հետ, որի կրկնությունը, ինչպես գիտենք, բախտորոշ եղավ կայսրության համար:**

Կարևոր է նաև հեղինակի դիտարկումը Սև ծովից Պոնտական լեռներով անցնող ոչ թե մեկ՝ Տրապիզոն-Թեոդոսիոպոլիս, այլև Զիգանայի լեռնանցքից շեղակի դեպի արևելք՝ մինչև Շիրակ և Արագածոտն երկրորդ բանուկ ճանապարհի մասին: Այս վերջինի վերաբերյալ նա մանրամասնություններ չի հայտնում, բայց հղում է **Թիմ Միթֆորդի** այս տարի Օքսֆորդում հրատարակվելիք մենագրության ձեռագիրը, որին, ըստ երևույթին, ծանոթացել է ձեռագիր վիճակում³⁰: Հռոլվածում հեղինակը խուսափել է նաև կրկնելու այն իրողությունները, որոնք շարադրված են իր մեկ այլ գործընկերոջ՝ **Մայքլ Ուիթթրիի**՝ այս նույն ժողովածուում տեղ գտած պարսկա-բյուզանդական պատերազմների մասին աղբյուրագիտական ակնարկի էջերում (տե՛ս վերը):

Ամփոփելով՝ նկատենք, որ մեր տարածաշրջանի ռազմական անցյալն առանց երկար դադարների գրավել և շարունակում է գրավել արտերկրի տասնյակ հետազոտողների ուշադրությունը, ուստի մեր կողմից խիստ համառոտ քննարկված երկհատորյակը օգտակար կարող է լինել հայոց ռազմի պատմությամբ հետաքրքրվողներին՝ հայոց պատմության այս կարևոր բնագավառին հիմնավոր ծանոթանալու և այն արժանիորեն ներկայացնելու գործում:

Արտակ Ա. Դաբադյան
Պատմ.գիտ.թեկնասծու

30 Ախուրյանի հովտից Սև ծով այս ճանապարհը վերջերս կրկին հայտնվել է Քսենոփոնի «Անաբասիս»-ում նկարագրվող տասը հազար հույների նահանջի ճանապարհի վերականգնման տարբերակներից մեկում, տե՛ս **Iordanis K. Paradeisopoulos**, A Chronology Model for Xenophon's Anabasis, Greek, Roman, and Byzantine Studies 53 (2013) 645 – 686:

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Զ (ԺԲ) ԳՄԱՐԻ, ԹԻՎ 3 (47) ԽՈՒԽԱ-ՄԵԿՐԵՆԵՐ, 2014
ՎԷՆ ԽԱՄԱԽԱՅԿՎԱԿԱՆ ԽԱՄՔԵՆ

Արտակ Ա. Դաբաղյան – զբաղվում է պատերազմի մարդաբանության, ռազմի արվեստի պատմության, զինանշանագիտության և էթնիկ հակամարտությունների խնդիրներով, որոնց վերաբերյալ ունի երեք տասնյակից ավելի հոդվածներ: Համահեղինակությամբ հրատարակել է «Շուշին 1992-2002 թթ., հայերի վերադարձը ազատագրված քաղաք (ազգագրական ակնարկ)» (2004), «Տնտեսությունը, առևտուրը և էթնիկությունը սահմանամերձ գոտում. ազգագրական հետազոտություն Հայաստանի Տավուշի մարզում» (2008) գրքերը:

SIGNIFICANT CONTRIBUTION TO THE FIELD OF MILITARY HISTORY

War and Warfare in Late Antiquity: Current Perspectives (2 volume set: Late Antique Archaeology 8.1-8.2), ed. by Alexander Sarantis and Neil Christie, Brill: Leiden-Boston 2013, 1085 pages.

Artak A. Dabaghyan

ВАЖНЫЙ ВКЛАД В ОБЛАСТЬ ВОЕННОЙ ИСТОРИИ

Война и военное дело во времена поздней античности: текущие перспективы (2 том: Археология Поздней Античности 8,1-8,2), изд. Александр Сарантис и Нил Кристи, Брилл: Лейден-Бостон 2013, 1085 с (на англ. яз.).

Артак А. Дабагян